ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19-21

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» «01» 2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Արմեն Խաչատրյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Գառնիկ Հովհաննիսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում» 2021 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշման 1059. Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի 11001. «Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում» միջոցառմամբ նախատեսված մինչև 95 880 000 (իննսունհինգ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) դրամ գումար (ներառյալ ԱԱՀ-ն)՝ 2.1.2 կետով սահմանված հաշվետվության և ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման արձանագրության հիման վրա, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումները, ծախսերի նախահաշիվը, Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ներկայացված են սույն պայմանագրի համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 կազմակերպությունից պահանջել Ծրագիրը կատարել պայմանագրով սահմանված ժամկետներում.

2.1.2 կազմակերպությունից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, ինչպես նաև հաշվետվություն՝ դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը:

2.1.3 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող Ծրագրի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.4 պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Ծրագիրը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5 առանց իրականացված Ծրագրի միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրի իրականացման ժամկետները (Ծրագրի իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Ծրագրային միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.6 սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված Ծրագրային միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2 պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Ծրագրային միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի ձևաչափով կազմված ընդունման- հանձնման արձանագրությամբ:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.1. սույն պայմանագրի մաս կազմող N 4 հավելվածով սահմանված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունները՝ 2.1.2 կետով սահմանված Հ-8 ձևաչափով ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ 2.1.2 կետով սահմանված Հ-2 և Հ-4 ձևաչափերով ներկայացնել եռամսյակային հաշվետվություն՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:
2.4.9. Սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2 Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի կատարման համար կազմակերպությանը, որպես դրամաշնորհ վճարել պայմանագրի 1.1. կետով նախատեսված գումարը:
4.2. Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր, իսկ անհրաժեշտության դեպքում հունվար ամսվա հայտը կարող է ներկայացվել տվյալ տարվա հունվար ամսվա ընթացքում՝ սույն պայմանագրով սահմանված N 2 ձևաչափով, իսկ պետական մարմինը՝ այն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն հայտով պահանջվող գումարը վճարում է կազմակերպությանը: Հայտով պահանջվող ֆինանսավորման չափը չի կարող գերազանցել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով հաշվետու ամսվա համար

նախատեսված գումարի չափը: Ընդ որում եռամսյակային հաշվետվությունների չընդունման դեպքում ֆինանսավորումը դադարեցվում է մինչև կատարված աշխատանքների ընդունումը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից և հետևյալ Հավելվածներից և ձևերից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը.
Հավելված N 1 -Ծրագրի միջոցառումներ,

սծ N 2- Ծրագրի ծախսերի նախահաշիվ,
սծ N 3 – Ծրագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց,
սծ N 4 - Ծրագրի միջոցառումների և ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների
ման ժամանակացույց,
Հանձնման-ընդունման արձանագրություն,
Ծախսերի կատարման հայտ:
այմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունվում են
ագրին կից Ձև 1-ի հանձնման-ընդունման արձանագրությամբ, որը Պայմանագրի 2.1.2
նշված ժամկետներում, Հաշվետվության հետ միասին, երկու օրինակից լրացված,
րված և կնքված ներկայացվում է Կազմակերպության կողմից:
յմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ
թե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
այմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, 12 էջից, որոնք ունեն
սրազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
ամանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես
ույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են
ոանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
Հ էկոնոմիկայի նախարարություն Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 ենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900011032167 ՀՎՀՀ 02698604	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Ծովակալ Իսակովի 22/9 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900018003872 ՀՎՀՀ 01805817
Գլխավոր քարտուղար՝ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ	Տնօրեն՝ ԳԱՌՆԻԿ ՀԱՎԱՆՆԻՍՅԱՆ

25.01.2021թ.

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազար դրամ
1.	«Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում»	315 000 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածության վրա կատարվում է մոնիթորինգ, որից շուրջ 135 000 հա մկնանման կրծողների և 80 000 մորեխների, 25 000 հա հացահատիկային փոշեմրիկի և ժանգի համար, պտղատուների 30 000 հա, բանջարաբոստանային կուլտուրաների 20 000 հա և խաղողի այգիների 25 000 հա:Ուսումնասիրվելու են Հայաստանի Հանրապետության 10 մարզերի թվով 170 համայնքների գյուղատնտեսական հողերի՝ շուրջ 76375 հա , բերրության ցուցանիշները՝ հողում ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունները, որոնց հիման վրա կազմվելու են և համայնքներին են ներկայացվելու հողերի ագրոքիմիական քարտեզները:	Հանրապետության 315 000 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածության վրա մշտադիտարկում, մոնիթորինգ:Ագրոքիմիկոսները հողերի նմուշառումը կատարում են համայնքի ներկայացուցչի մասնակցությամբ: Աշխատանքների ավարտից հետո համայնքի ղեկավարը իր ստորագրությամբ և կնիքով հաստատում է կատարված աշխատանքները (կատարողական ակտը): Ագրոքիմիկոսները նմուշները դաշտից տեղափոխում են Երևան՝ ագրոքիմիական լաբորատորիա փորձաքննության, միաժամանակ ներկայացնում է համայնքի հետ կնքված պայմանագիրը, կատարողական ակտը, ինչպես նաև նմուշառման կետերի աշխատանքային քարտեզը: Փորձաքննության ավարտից հետո կազմվում է յուրաքանչյուր համայնքի համար նոր ագրոքիմիական քարտեզ (երկու օրինակից), պատրաստվում է հանձնարարական, պարարտացման տեղեկագիր և քարտեզի 1 օրինակի հետ հանձնվում է համայնքին, ինչը համայնքապետը հաստատում է ընդունման-հանձնման ակտի միջոցով: Աշխատանքների կատարման ողջ ընթացքում ագրոքիմիկոսները իրականացնում են նաև խորհրդատվական ծառայություններ:	Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բուսասանիտարական վիճակի գնահատման, բույսերի առավել վնասակար օրգանիզմների՝ մկնանման կրծողների ու մորեխների, ինչպես նաև բազմամյա տնկարկների, բանջարաբոստանային, հացահատիկային մշակաբույսերի հիմնական վնասատուների ու հիվանդությունների հայտնաբերման, հաշվառման, տարածման արեալների ճշտման և հաշվի առնելով վնասակարության տնտեսական շեմերը պայքարի ճիշտ ժամկետների ահազանգման և տարածման կանխարգելման նպատակով հետազոտությունների ու դիտարկումների իրականացման միջոցով նպաստել գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ու գյուղատնտեսական ոլորտում համախառն ներքին արդյունքի ավելացմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր, անկորուստ ու որակով բերքի ապահովմանը և գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը:1)-հողերի ապահովվածությունը՝ մատչելի սննդանյութերով և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հետազոտված և հիմնավորված համակարգը: 2)-Մշակովի հողերի դաշտային և լաբորատոր հետազոտման արդյունքում կազմված ագրո-քիմիական քարտեզները:3)- հողի բերրիության բարձլացման համար կորվեն պարարտացման չափաբաժինները 4)-պարարտանյութերի օգտագործման ագրոտեխնիկական ցուցումները և ժամկետները	30/12/2021	95880.0
	Ընդամենը					95880.0

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032167
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար
ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կազմակերպություն
«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք.Երևան, Ծովակալ Իսակովի 22/9
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817
Տնօրեն
ԳԱՌՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. ____________ _____ -ի կնքված
N________________ պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

NN	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Գումարը /հազ. դրամ/
	Անվանումները	
Ա	Բ	Գ
1	**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ** այդ թվում՝	**79900.0**
1.1	***Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում***	**79900.0**
1.1.1	- Մասնագիտական ծառայություններ	79900.0
2	**ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** այդ թվում՝	**15980.0**
2.1	***Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ***	**15980.0**
2.1.1	- ԱԱՀ	15980.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**95880.0**

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք. Երևան,
Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032050
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար
ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

Կազմակերպություն
«Գյուղատնտեսական ծառայությունների
կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817
Տնօրեն՝
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կ.Տ.

2021թ. ______________-ի կնքված

N______________ պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը՝ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

2.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը 900011032167

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
04	02	01	05	104004

Ծրագրի անվանումը Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում

(հազար դրամ)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին (աճողական)												
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին	4637			10,322.4	47,159.4	47,159.4	47,159.4	79,817.9	79,817.9	79,817.9	95,880.0	95,880.0	95,880.0	95,880.0
Ընդամենը		0.0	0.0	10,322.4	47,159.4	47,159.4	47,159.4	79,817.9	79,817.9	79,817.9	95,880.0	95,880.0	95,880.0	95,880.0

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900011032167
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար
ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմակերպություն
«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք.Երևան, Ծովակալ Իսակովի 22/9
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817
Տնօրեն
ԳԱՌՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

Կ.Տ.

2021թ. _____ _____-ի կնքված
N_____պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ էկոնոմիկայի նախարարություն***

Հիմնարկի անվանումը՝ ***«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ***

Ծրագրի անվանումը ***Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում***

Նկարագրությունը	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ընթացքում ընդ որում աճողական			
		I եռամսյակ	I կիսամյակ	ինն ամիս	տարի
		քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6
Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման և ագրոքիմիական քարտեզների և պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման նպատակով դաշտային հետազոտությունների իրականացում	Վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով հետազոտված տարածքներ, հա	*46000*	*180600*	*286350*	*315000*
	Հետազոտվող տարածքից վերցված հողանմուշի լաբորատոր փորձաքննություններ, քանակ		*14151*	*39238*	*64325*
	Գյուղատնտեսական նշանակության հողերի կազմված ագրոքիմիական քարտեզներ և համայնքներին տրամադրված պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր, հատ		*45*	*105*	*170*
	Ճշտված ագրոքիմիական քարտեզներ տրամադրված բնակավայրերի տեսակարար կշիռը բնակավայրերի ընդհանուր թվում, տոկոս				*20*
	Կայուն բուսասանիտարական իրավիճակի ապահովում, տոկոս				*90*

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
ՀՎ 900011032167
ՀԿՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար
ԱՐԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Կազմակերպություն
«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք.Երևան, Ծովակալ Իսակովի 22/9
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
ՀՎ 900018003872
ՀԿՀՀ 01805817
Տնօրեն
ԳԱՌՆԻԿ ՀԱՎԱՆՆԻՍՅԱՆ

Ձև 2
2021 թվականի ----------------------------կնքված
N---------------------------------- պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀԱՅՏ N

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ
Կազմակերպության անվանումը

ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ

Բաժին 04 Խումբ 02 Դաս 01 Ծրագիր 1
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

2021 թ.
ԱՄՍԱԹԻՎ

Բուսասանիտարիայի ծառայությունների, հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում
____ (ծրագրի անվանումը)

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի
ստորագրություն՝

Կ. Տ

Երկրորդ կարգի
ստորագրություն՝

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման, սույն պայմանագրի N2 հավելվածով հաստատված ծրագրի կատարման ծախսերի նախահաշվին համապատասխան տրված հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում

Ձև-1

Հաստատում եմ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____
Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

(Պետական մարմնի անվանումը)-ի և (Կազմակերպության անվանումը)-ի միջև «____» _____ 20___ -ին կնքված N_____ պայմանագրի շրջանակներում կազմակերպության կողմից 20___ թվականի _____«____»-ից «____» - ն ընկած ժամանակահատվածում կատարվել (մատուցվել) են պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (ծառայությունները).

Կատարված աշխատանքների (մատուցված ծառայությունների)

/	Անվանումը	Չափի միավորը	Կատարման ժամանակա-հատվածը	Քանակական ցուցանիշները			Արժեքը (հազ. դրամ)		
				Նախատեսված		Փաստացի	Նախատեսված		Փաստացի
				Տարեսկզբին հաստատված	Ճշտված		Տարեսկզբին հաստատված	Ճշտված	
			(Ըստ եռամսյակների՝ աճողական)						
			(Ըստ փաստացի կատարման ժամանակա-հատվածի)						

Կատարված աշխատանքները համապատասխանում են կնքված պայմանագրին ու ծրագրին և ընդունվում են:

Աշխատանքը հանձնեց՝

_____

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Աշխատանքն ընդունեց՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Ֆինանսական ստորաբաժանման ղեկավար

_____

(ստորագրություն ազգանուն, անուն)